

— Շուտով կվերջանան քարային աշխատանքները, և մեծ բանաստեղծի տուն-թանգարանը պատրաստ կլինի Հայաստանում Սովետական կարգեր հաստատելու երեսնամյակին, — չապասեծով մեր հարցին հայտնեց ճարտարապետը և ապա շարունակեց.

— Բանաստեղծի տուն-թանգարանը, ինչպես տեսնում եք, եռահարկ է: Առաջին հարկը ծառայելու է որպես ապաստարան, այսպիսի ապաստարաններ ունեն բոլոր թանգարանները: Երկրորդ հարկում կընկվեն բանաստեղծի այրին և բարեկամները: Իսկ երրորդ հարկում կցուցադրվեն տուն-թանգարանի էքսպոնատները:

Հետո նա ծանոթացրեց տուն-թանգարանի ներքին կահավորմանը:

— Այս պատշգամբի պատերին յուշաներկով կնկարվեն լուռու պելլագծները, կդրվեն զանազան իրեր ու դիմանկարներ: Իսկ ներքևում, կենտրոնական մուտքի աջ և ձախ մասերում, ողորկ պատերի վրա, հսկա սյուների միջև կկորագրվեն Թումանյանի ասույթներին:

Այս սենյակը Թումանյանի ննջարանն է. այստեղ կդրվեն աճյա բոլոր փրերը, որ ունեցել է նա Թիֆլիսում եղած ժամանակ: Իսկ այս մյուս սենյակը հյուրասենյակն է: Այս սրահում էլ, — շարունակում է ճար-

տարապետը, — կցուցադրվեն Թումանյանի գրքերի տարբեր հրատարակությունները՝ նախասովետական շրջանից մինչև մեր օրերը: Այստեղ կդրվեն սեղաններ, ցուցադրակներ, մեծ բանաստեղծի հետ առնչություն ունեցող գրողների, հասարակական մյուս գործիչների, ծնողների և այլ մարդկանց դիմանկարներ, բանաստեղծին վերաբերող գրքեր և զանազան նկարներ, մի խոսքով՝ այն ամենը, ինչ որ կապված է նրա կյանքի ու գրական-հասարակական գործունեության հետ:

— Ես եղա Թիֆլիսիում, — վերջում ավելացրեց ճարտարապետը, — ուսումնասիրեցի Թումանյանի «Վերնատուն»-ը, ուր այն ժամանակ հայ գրողները հավաքույթներ էին ունենում: Տուն-թանգարանը նախագծված է այդ տան նման. միայն արտաքինը ես ձևավորեցի այլ կերպ, այսինքն՝ հայկական ճարտարապետության ոճով: Շուտով կավարտվեն շինարարական աշխատանքները և տուն-թանգարանը պատրաստ կլինի:

Մենք սեղմեցինք ճարտարապետի ձեռքը և ընկերոջս հետ խորհրդածելով, իջանք աստիճաններով:

(Արատալված «Գրական բերք»ի 1950 թ. օգոստոսի 31-ի համարից)

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Երևանի Նոր Արեշ ավանի մոտ գտնվող Արինբերդում (Ղանլի թափա) ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը հայտնաբերել է ուրարտական երկու սեպագիր արձանագրություն: Ընթերցումից պարզվեց հետևյալը: Երկու արձանագրությունների տեքստերն էլ շինարարական բովանդակություն ունեն: Արձանագրություններից մեկը (13 տող), որ ամբողջական է և հիմնալի պահպանված, պատկանում է Արգիշտի 1-ինին (8-րդ դար մեր թվագրությունից առաջ): Նշվում է, որ Արգիշտին այնտեղ կառուցել է «Հոյակապ բերդ» և անվանել է Իրրունի (Սուրունի), պարսպապատել է («), կառուցել է «Հզոր ձեռնարկություններ»: Տեքստի վերջում դրված է ուրարտական արձանագրություններին հատուկ արքայական տիտղոսաշար:

Երկրորդ արձանագրության քարը ջարդված է և տեքստը թերի է, սակայն պահպանված մասը հնարավորություն է տալիս վերծանել այն ամբողջությամբ: Արձանագրության հեղինակն է Արգիշտի 1-ինի հաջորդը՝ Սարգուր 2-րդը (8-րդ դար մ. թ. ա.),

որն ըստ երևույթին կառուցել է աշտարակ («): Քարի վրա պահպանված է 9 տող, սակայն մեր կարծիքով պետք է եղած լինի 11 տող: Այս տեքստը ևս ավարտվում է տիտղոսաշարով:

Այս արձանագրություններն ունեն գիտական կարևոր նշանակություն: Նրանք ցույց են տալիս, որ Ուրարտուն իրոք Արգիշտի 1-ինի ժամանակ եղել է մի հզոր պետություն՝ տարածված Վանից մինչև Սևան: Երևանը իր շրջակայքով և Արարատյան դաշտավայրը Ուրարտուի համար կազմել են երկրորդ հիմնական կենտրոնը: Արգիշտի 1-ինը ուրարտական բերդերի եռահանգույց շղթաներով պատել է իր տիրապետության տակ եղած տեղիտորիս:

Մինչև օրս Արինբերդը հայտնի էր միայն Արգիշտի 1-ինի շորստողանի մի արձանագրությամբ, որը հաղորդում է աշտարակի («) կառուցման մասին: Նորագյուտ այս տեքստերը պարզում են, որ Արինբերդում Արգիշտին կառուցել է ճակ (և անշուշտ առաջին հերթին) բերդ (բերդ բառը): È, 'ari-ն,

որը բերդին կից անհրաժեշտ մի կառուցվածք է (և ոչ թե բերդ, ինչպես թարգմանում են ոմանք), կառուցել է Սարգսյու 2-րդը: Այս բոլորը մեկ անգամ ևս ապացուցում են, որ Կարմիր բլուրը իր դիրքով չէր կարող վրիպել Արդիշտի 1-ինի ուշադրությունից: Կարմիր բլուրը մինչև Ռուսա 2-րդը պետք է եղած լինի ուրարտական հռահանգույց բերդերի մի օղակը՝ կապված հատկապես Արինբերդի հետ:

Հիշյալ արձանագրությունների հայտնաբերումը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արինբերդի առաջիկա պեղումների ժամանակ կլուսաբանվեն Հայաստանի նախնական շրջանի պատմության բազմաթիվ մոլթ հարցեր:

(Արտատված «Սովետական Հայաստան» թերթի 1950 թ. հոկտեմբերի 3-ի № 234-ից)

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ 1950 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և պետական էրմիտաժի համատեղ էքսպեդիցիան, որը պեղումներ էր կատարում Կարմիր բլուրում, ավարտեց իր 1950 թվականի պլանով նախատեսված աշխատանքները:

Էքսպեդիցիայի ղեկավար, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Ստալինյան մրցանակի լավագույն Ռ. Բ. Պրոտորովսկին այս տարվա պեղումների արդյունքների մասին Հայկական Հեռագրական Գործակալության թղթակցին հաղորդել է հետևյալը.

— Արդեն ինը տարուց ի վեր պեղումներ են կատարվում Կարմիր բլուրում: Անցած տարիների պեղումները ցույց տվեցին, որ այստեղ գտնվում են մեր թվարկությունից առաջ 7-րդ դարի ուրարտական ամրոցի մնացորդները: Բլուրի վրա գտնվող միջնաբերդում, որտեղ ապրել է ուրարտական փոխարքան, պահպանվել են ընդարձակ արհեստավորական շենքեր և մառաններ:

Այս տարի բացվեց գինու մի մեծ մառան, որտեղ գտնվեցին կիսով չափ հողի մեջ թաղված 70 խոշոր կարասներ: Նրանցից ամեն մեկի վրա հիերոգլիֆներով նշված է տարողության չափը: Մառանում եղած կարասների ընդհանուր տարողությունը կազմել է մոտ 70,000 լիտր:

Վերջին երկու տարում հայտնաբերված երկու մառաններում պահպանվել է առնվազն 160,000 լիտր գինու պաշար:

Իր գոյության վերջին տարիներին մեր թվարկությունից առաջ 6-րդ դարի սկզբում, ուրարտական վարչական կենտրոնը տնտեսական անկում ապրեց: Հարկերը կանոնավորապես չէին ստացվում, և միջնաբերդի պաշարները նվազեցին:

Ամրոցի անկումից հետո կարասները դա-

տարկվեցին, նրանք մասամբ լցվեցին հացահատիկով և ալյուրով: Նրանցից մի քանիսի մեջ հայտնաբերվեցին մետաղյա իրեր:

Կարասներից մեկի մեջ, մի խոշոր բրոնզյա կաթսայի տակ գտնվեց Արդիշտի թագավորի սաղավարտը, որը հանդիսանում է ուրարտական արվեստի գեղեցիկ նմուշ: Սաղավարտի վրա կան խորաքանդակ զարդանկարներ: Սաղավարտի վրա պատկերված են սրբազան ծառերի առաջ կանգնած աստվածներ, ուրարտական մարտականքեր և հեծյալ մարտիկներ:

Մի ուրիշ կարասի մեջ հայտնաբերվեցին վահանների միջին մասի բրոնզյա վեց կոնաձև զարդեր, որոնց վրա պահպանվել են արձանագրություններ և ցույցերի ու առյուծների գլուխների պատկերներ:

Մառանում գտնվեցին նաև բազմապիսի առարկաներ՝ առյուծների և ցույցերի պատկերներով զարդարված կապարձներ, գավաթներ, ապարանջաններ, ջուհակային դազգահի հարմարանքներ, եղջերուների սղոցված եղջյուրներ, ոսկրից կերտված այծի գլուխ և ալյն: Հայտնաբերվեցին ուրարտական մի քանի քարե պատկերազարդ կնիքներ:

1950 թվականի պեղումները տվեցին խիստ արժեքավոր նյութեր, որոնք բնութագրում են մեզանից ավելի քան 2,600 տարի առաջ գոյություն ունեցած ուրարտական պատմության կուլտուրան:

Կարմիր բլուրում կատարված պեղումների ամբողջ ժամանակաշրջանում արդեն գտնվել են ուրարտական 140 արձանագրություններ: Հաջորդ տարի պեղումներ կկատարվեն միջնաբերդի կենտրոնական մասում: Պետք է սպասել, որ երևան կբերվեն մեր հայրենիքի հնագույն պատմությանը վերաբերող նոր հուշարձաններ: